

զանեցի Մարտիրոս վարպետն ևս առաւել զմարմաւոր ծնաւդն զՏէր Մարտիրոսն և զխանդարն յիշեցէք, և զբեցաւ և աւարտեցաւ սուրբ աւետարանս թվին ՌՆԼԻ-ին» :

Անշուշտ, վերոյիշեալ նկարագրութիւնը ամենաթոյլ մի ճիշ է այն ահաւոր բրու- նութիւնների հանդէպ, որոնց սրտառուչ նկարագրութիւնը տւել է Ա. Գաւրիթի պատմագիրը. ընդ ամենը 25 տարի Փէրիոյ գիւղերում հաստատւած մերկ և բոկոտն հայ գաղթականութիւնը ենթարկւած է բռնաւորի կրօնական հալածանքներին և սովալլըն հայութիւնը էր խղճի ազատու- թիւնը ձեռք է բերում 2200 թուման տուգանքի վճարումով. թէ ինչ ահռելի զուժար էր այդ 300 տարի առաջ՝ դրամի սակաւութեան այն զարուժ կարելի է պատ- կերացնել հետեւեալ հաշուից. 2200 թու- մանը հաւասար է 22,000 զոանի, իսկ մէկ զոանը՝ 1,000 դինարի. այն ժամա- նակ մէկ լիւր՝ հացը արժէր մօտ 4-6 դինար, իսկ այժմ 2 և կէս զոան (կամ 2500 դինար). այն ժամանակ 15-20 թումանով կարելի էր գնել կամ պա- տրաստել մի ընդարձակ բնակարան Ն. Ջուղայում, իսկ այժմ միջակ մեծութեամբ մի բնակարան հազիւ կարելի է գնել 2-3 հազար թումանով: Այս համեմատութիւնից պարզ է, թէ Փէրիացոց վճարած 2,200 թումանը ինչ խոշոր գումար է եղել, իսկ թէ ինչպիսի դժարութեամբ է գանձել յիշեալ զուժարը՝ թող երևակայութիւնը պատկերացնէ:

Շահ Աբասի շնորհած կրօնի ազատու- թիւնը՝ համաձայն վերոյիշեալ յիշատա- կարանի՝ ահա այդ ձևով է եղել, և դա ո՛չ թէ մէկ անգամ, այլ բազմաթիւ ան- գամներ, ո՛չ միայն Շահ Աբասի օրով, այլ և յետնորդ Շահերի օրով. կրօնը վա- ճառքի ապրանք էր և Պարսից թագաւոր- ների համար եկամտոսի անսպառ աղբիւր:

Ջուղա-Սպահան,

Ս. ՄԵԼԻՔ-ՅԱՎՈՐԵԱՆ

2. Մէկ լիւրը հաւասար է մօտ 16 ուսական զըր- վանայի:

ՔՆՆԱՎԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ ԵՂՆԻԿԻ ՄԱՍԻՆ
(Լ. Մարիէսի աշխատութեան աւթիւ)

(Շար. տես Բազմ. 1926 էջ 866)

Ուշի ուշով դիտելով Եզնիկի երկը, « Եղծ ազանդոց »-ի բնագիրը, իր ներկայ կացութեամբ, գալիս ենք այն եզրակա- ցութեան, որ նա յերիւրուած է երկու տեսակ նիւթից, հիմնական և թարմատար: Մէկը՝ նրա զրական շէնքի քարերն են, միւսը՝ շաղաղ, Նրանք տարբեր են ծագու- մով և արժէքով:

Արջ նրանց իրար մօտ բերել և շարել կանոնաւոր գծերով նուրբ խմբազրական գործ է, մի տեսակ վերագրութիւն այն մտքով, ինչ որ ասացինք յառաջարանի նկատմամբ: Հիմնական անուանածս մասն- ըր, անկասկած, թարգմանածոյ են. և ոչ միայն գնոստիկների յանդիմանութիւնը, որ Մեթոդի հայացումն է, այլ և Մարկիրոնի, ինչպէս և զրուսնականութեան և յոյն փիլիսոփաների հայեացքների:

Թարմատար հատուածներն ևս, թուժ է, զբաւոր աղբիւրներից են քաղած. գոնէ հայ ժողովրդական մտաշխարհին վերաբե- ըեալ նիւթերը, անպայման, առնուած են մի զբաւոր յիշատակարանից որ հասել է մեզ:

Քննանորէն ծագում է մի օրհասական հարց. արդեօք միևնոյն անձն է, որ հայե- ընի է վերածել օտար աղբիւրները և յետոյ նրանց աւելացրել այն՝ ինչ որ գտել է պատրաստի ընթացիկ հայ զրականու- թեան մէջ, թարգմանածոյ թէ ինքնուրոյն, և այսպիսով շաղկապել մի ամբողջական երկ. թէ այլ ոք է, որ թարգմանել է օտարը և այլ՝ որ խմբագրել է, խառնելով օտար և հայ նիւթերը՝:

1. Հայ նիւթեր ստեղծ լինց ուզում հասկանալ այն- պիսի մանրուց, ինչպէս «խարամանիք» մեկնութիւնը. որ խմբագրի անմական կարծիք կարող էր լինել, նմուշ ժողովրդական կոչուած ստուգաբանութեան. խարամանի իբրև թէ Արշակ մականուն է «ստի յարեւ զարգակ- նաստեղծկան արկանելոյ, ուստի և գանունն իսկ խարա-

Եթէ մի անձի գործ է, արդեօք հնարաւոր է հայ Փուլիւրի թանգազին էջերը պարունակող «Հարցմունք Գրիգորի» յիշատակարանը, որ աղբիւր է ծառայել Եղծ աղանդոցին, տանել և զետեղել հայ դպրութեան արևածագին: Իսկ եթէ չէ, եթէ յիշատակարանը աւելի ուշ գրութիւն է, ինչպէ՛ս հասկանանք նրա ձուլումն երկի սմբողջութեան հետ:

Կամ Հիպպոլիտի հատուածը, ո՞վ է ներս առել երկի մէջ, զրգի վերջին ճարտարապետը՞ Թէ իսկական հեղինակն ինքն Եղծիկը և ուրեմն Հիպպոլիտի թարգմանութիւնը նախ քան Եղծիկն է: Դժուար բարոյցի են, սերտօրէն կապուած հայ զրպրութեան ծագման բարդ հարցին:

«Եղծ աղանդոցն» իր նիւթով և բովանդակութեամբ իսկ մի ինքնօրինակ երևույթ է ամբողջ հայ զրականութեան մէջ և նորա բազմիւր զրական երախայրիքների կողքին, նորա այնքան վաղ երևումը, գրեթէ անզոհուած: Անշուշտ մի մեթաֆոր առիթ լինելու էր. պարզել նորա իսկական շարժառիթը, կը նշանակէր ձեռք բերել մի վստահելի կռուան, ժամանակագրական յնանկէտ, ներշնչածս կասկածները որոշ սահմանների մէջ պահելու համար:

Եղծիկի ժամանակ ընդհանուր եկեղեցու կեանքի մէջ ամենախոշոր երևույթը Եփեսոսի ժողովն էր: Եթէ ոչ ներկայ և մասնակից ժողովի զբաղմունքներին և կամ սոսկ ականատես, 431 թուի մօտերը այնտեղ լինելով՝ մտնէ ծանօթ էր ժողովի զործունէութեան:

Ժողովականները նիստերը փակելուց յետոյ մի նամակ են ուղղում կիլիստին պապին (422-432), ամփոփ հաշիւ ներկայացնելով ժողովի զործունէութեան մասին: Նամակի վերջում ասում է հետևեալը. «Αναγωσθεσέντων δε έν τῷ άγιώ συνόδω τών ύπομνημάτων τών πεπραγμένων έπι τῷ κα-

θαιρέσει τών άνοσίων Πελαγιαωνών και Κελεσσιανών, Κελεστίου Πελαγίου, Ίουλιανού, Περσιδίου, Φλώρου, Μαρκελλίνου, Ορεντίου και τών τά αυτά τούτοις φρονούντων, έδι-καώσαμεν και ήμεις Ισχυρά και βέβαια μένειν τα έπί'αυτοίς ώρισμένα παρα τῆς σῆς σεοσεβείας. Ρ. L. 50 col 522.» «Կարաշարով սուրբ ժողովում այն վաւերագրուները որ վերաբերում են անարժան Պելագիականների և կիլիստիականների կարգալուծման, այն է կիլիստի, Պելագի, Յուլիանի, Պերսիդի, Փլուրի, Մարկելլինի, Որենտի և միւս սրանց նման խորհողների, որոշեցինք մենք ևս, որ քոյդ Աստուածայալութեանը կողմից որսած վճիռը հաստատ և անխախտ մնայ »:

Պելագիականութիւնը բաւականին զորեղ շարժում էր, որ արեւմուտքից անցաւ նաև արևելք և կարող էր ծանր հետևանքներ ունենալ, եթէ Ս. Ալգուստինի ընդդիմութիւնը չլինէր, որի շնորհիւ նորաւար սեւեռները խեղդուեց:

Պելագ-Ալգուստինեան վէճը սերտօրէն կապուած էր անձնիշխանութեան հարցին: Առիթը Ալգուստինի աղօթքն էր. «da quod iubes et iube quod vis» սուր ինչ որ հրամայում ես, և հրամայիր ինչ որ ուզում ես: Պելագ (Pelagius) կրօնաւորը այս մտքի մէջ տեսնում էր մարդու թանգազին իրաւունքի նսմացումն: Նորա բողոքը շուտով համակրողներ գտաւ, որոնց մէջ ամենից մոլեռանդն էին կիլիստ (Celestius) և Յուլիան:

«Libertas arbitrii, qua a Deo emancipatus homo est, in admittendi peccati et abstinendi a peccato possibilitate consistit» «անձնիշխանութիւնը, որով մարդս ազատագրուած է Աստուծուց, մեղք զործելու կամ մեղքից հրաժարելու հնարաւորութիւնն է»:

Անձնիշխանութիւն, յուսարէն օւթջօսւօ,

մտոյ առ »: Խարամած Ալերիանի, ուրեմն Արեւի. մի այլ և աւելի վրն հնչումն է: աւելի ուղիղ Հարթման. բայց մեր հեղինակը սխալմամբ կապում է պարթիկ խար: Կնոսթ բարին, որ արև է նշանակում, և հետում մի մտածածին բացատրութիւն:

1. Runze, Freiheitswillen, Realencyclopädie für Prot. Teol. Kirche, Կոս 21. էջ 812.
2. Pelagii libellus fidei (P. L. 45 e 1716). J. Tixeront, Hist. des dogmes II 488.

առիթ ունենար ծանօթանալու աղմուղ հարցին: Թե՛րևս այս պայմաններում է որ յղացել է իր մեծ գրական գործի միտքը: Մարդու ազատութեան անձնիշխանութեան շուրջը բոլորող վիճարանութիւնն և այն՝ ընդհանուր եկեղեցու ծոցում մի աւելի քան պատե՛հ զէպք էր, որպէս զի հայ եկեղեցականը պարտք զգար նոյն հարցը որո՛ւնալու և հետեանքը ներկայացնելու իր հայրենի եկեղեցուն ճշմարտութեան լուսով:

Գուցէ առարկեն, որ պելագրիականութեան մասին խօսք չկայ Եզնիկի մօտ: Ճիշդ է, Պելագրի վարդապետութիւնը զոն մի ժամանակ շարունակեց վրդովել արեւմտեան եկեղեցին, և որոշ արձագանգ ունեցաւ և Նեստորականութեան շրջաններում, այնպէս որ տակաւին վեցերորդ դարու վերջին ասորի կաթողիկոսը նշովք էր կարգում նրանց, որոնք մեղան ի բնէ են համարում՝ սակայն պէտք է խոստովանել, որ արեւելեան եկեղեցու համար նորալուր ուսմունքը միանգամայն անհետեանք անցաւ: Մասնաւորապէս Հայ եկեղեցու համար կարևորն այդ ուսմունքը չէր, այլ նրա հիմը կազմող գաղափարական խմորը: Տակաւին քրիստոնէութեան առաջին քառազմեքերը Յուստին, Թէոփիլ, Հիպպոլիտ և միւսները և նրանց հետևութեամբ եկեղեցական գրողները ըստ արժանւոյն ու շարութեան էին առել անձնիշխանութեան սկզբունքը: Պելագրի զէպքը մի նոր խթան էր յառաջ մղելու և վճռական տեսակէտ մշակելու մի հարցի վրայ, որ քրիստոնէութեան բարոյականութեան խարխիւն է կազմում:

Ահա այս պահանջիւ հոգատարը հայ

եկեղեցու համար եղաւ Եզնիկն իր նշանաւոր երկով: Կապելով Եղծ աղանդոցի յղացումը Եփեսոսի հետ, բնաւ չհեռու գում գորանով կանխորոշել և իր Ծնունդը: Եզնիկը մօտ է կանգնած Պրոկլի Թըզթին՝:

Եթէ միւս հայ հեղինակները իրենց թերութիւններով են անվստահելի. Եզնիկն, ընդհակառակ, իր գործի կատարելութեամբ է, որ կասկած է յարուցանում: Մեր տպագրութիւնն այն չէ, որ «Եղծ»ը՝ իր տեսակում առաջին գործ է: Կազմը ըստ բարդ է, թէև պարզ է թուում, նման է մի շքեղ հագուստի, որ սակայն տեսակ տեսակ կտորներէից է կազմուած: Արդեօք կտորները նոյն հեղինակին են պատկանում, թէ նրանցից շատերը զրականութեան մէջ կանոնի գոյութիւն ունէին ցանուցիր և յետոյ են իրար կցուել և մի մարմին կազմել: Հիպպոլիտի օրինակը խրատական է: Նրա անունով մեզ հասած մի քեղքը մտած է Եզնիկի շէնքի մէջ իբրև թանգագին քար: Ուղիղ այն հարցին է վերաբերում, որը հետաքրքրում է մեր հեղինակին: 1. «Ոմանք ի հարցն անմահ ասացին զմարդ: 2. Այլը՝ ոչ, անմահ ասեն և ոչ մահկանացու, այլ ընդունիչ կամ մահու կամ կենաց: 3. Բայց մեղք և վիճնն ևս երբ մահկանացու եղև և մեղանչելի, որպէս թէ աստուած պարտ իցէ մահու նորա և մեղաց: Եր պայն ոչ գիտեն եթէ անմիտք վաղենտիանոսացն են, որք բնութեամբ և ծննդեամբ ասեն զմեղան. և զնոյն հաստատեալ ասեն սոքա, եթէ որ անմահ ոք է ոչ մեղանչէ, որպէս թէ ասացնն թէ որ մեղանչելի ոք է, նմա չէ մարդ ոչ մեղանչել՝:

1. Կարբուր կաթողիկոսը (596-604). Chabot, Synod. 459.

2. Եզնիկի յառաջաբանի՝ «Ճա և որ ընդ ճառագայթս արեգական հայել կամիցի, պարտի զպոռորութիւն աւացն՝ զպտտն և զքթն ի բաց պարզել, զի մի՞ մթաթըն՝ որ զբօցն ըրպայցնն արգել հայելոյ ի յտակութիւն լուսայն լեցին», յիշեցնում են Պրոկլի Թէոփիլի՝ «Զի աչք բմբերք զարեգական ճառագայթս սուրբս ընդունել չկարեն և միտց ճիւղադաշտալ ի հաստաց քարբրու.

Թեան սնդր հայել չկարեն» λημιον γαρ σφραλισδος ηλιου ακτινας καθαρως οδ δαχεται και αποσποδουα πιτοεως οδ προσεται υφος. Այս միակ նախադասութեան բառական է, որ Եզնիկի ճանօթութիւնը Պրոկլի Թէոփիլ ստեղծեալ կոչուածի:

3. Ձեռ. Պարբաի Ազգ. Մասննդ. Թի. 116-118, Թուգթ 110 v. 2. Գալէմարեանի քրտաբարակութեան մէջ կան անճշդութիւններ: Անհկաս է Մացել ճնազգրում պտկա սողիքը ստորին լուսանցքի եղծման հետևանքով:

Հիպպոլիտը հերքում է առաջին և եր-
րորդ կարծիքը և ընդունում երկրորդը,
կանգ առնելով անձնիշխանութեան հողի
վերայ, ինչպէս Յզնիկը: «Ուղղոց մտաց,
այն է թէ արար Աստուած զմարդն ըն-
դունիչ պատուիրանաց և մահու», ահա
Հիպպոլիտի լուծումը:

Այսպէս է մտածում, նկատենք ի դէպ,
և Հիպպոլիտի ժամանակակից Թէոփիլ
Անտիոքացին. «οὐτε οὖν ἀθάνατον αὐτον
ἐπιολήσεν οὐτε μὴν θνήσκον, ἀλλὰ δεκτικὸν
ἀμφοτέρων»¹, այսինքն, « ո՛չ անմահ զնա
արար և ոչ մահկանացու, այլ ընդունիչ
երկոցունց »:

Յերրորդ կարծիքը եթէ մահկանացու եղև
յիշեցնում է Պիլատի « Adam mortalem
factum »: Արդեօք Հիպպոլիտի թարգմա-
նութեան առիթը դարձեալ նոյն Պիլատեան
վէճերը չեն եղել, աւելի հեղինակաւոր հեր-
քում խորթ ուսման ղեկարար թէ կարելի
լինէր գտնել:

(Շարայարելի)

Պրոֆ. Ն. ԱՊՈՏ

ԼԵՉՈՒՍԳԻՏՈՒԿԱՆ

Հ Ա Յ Ե Ր Է Ն Ն Ո Ր Բ Ա Ռ Ե Ր

ՈՍԿԵՐԵՐԱՆԻ ՄՍՏԹԷԻ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Գրեա Ա-Գ, ա. ՎԵՆԵՏ. 1826)

Ծանօթ. — Այս և յաջորդ զլիսի հա-
մար անհրաժեշտ էր ունենալ բնագրերները.
բայց առ այժմ ինձ համար այդ անկա-
րելի է. այնու ամենայնիւ ես կարեօր
համարեցի հաւաքել հոս բոլոր խնդրական
բառերը իմ բացատրութիւններով միասին,
առաջարկելով որ ձեռնհասները լրացնեն
իմ պակասները:

1. Theophyli, ad autolyoum. II, 27. P. G. VI, col 1084.

1. Այգոց

Որ ի ներքուստ ի սրտէն ելանիցէ, և
մինչ ի ներքան կայ՝ պղծէ, և յորժամ
արտաքս ելանէ՝ պղծէ... Բայց Մարկոս
ասէ և սրբէ յայցոյց կերակրոց (Ոսկ. մ.
բ. 26, էջ 731):

Բառին գործածութիւնը անյարմար է.
ձեռագրին լուսանցքին վրայ դրուած է
յայցոց, որ նոյնպէս անյարմար է: Կ'երևայ
թէ զըչագրական աղաւաղութիւն մ'է,
որուն մարտը ձեռ կը դժուարիմ գուշա-
կել: Հեղինակին ակնարկած տեղը (Մարկ.
է. 19) կը կարդանք « և սրբէ զամենայն
կերակուր »:

2. Պալմուլ

Կոչէ զմամոնայն տէր, ո՛չ վասն նորա
ինչ բնութեան, այլ վասն այնոցիկ՝ որ
ընդ նովան երթեալ զակնուցուն: Սովին
օրինակաւ և զորովայն աստուած կոչէ.
ո՛չ ըստ նորա ինչ պատուոյ, այլ ըստ
ձառայացելոցն թշուառութեան (Ոսկ. մ.
ա. 21, էջ 336):

Բուրբովին նոր բառ մ'է. ընդ նովան
ինչդրեր և ծառայել բառին համադրութիւնը
կը ցուցնեն որ կը նշանակէ «հպատակիլ»:

3. Գրախնայ

Որ չէ ընդ իս, ասէ, նա հակառակ իմ
է. և որ ո՛չ ժողովէ ընդ իս՝ ցրուէ...
Որ ո՛չ ընդ իս ժողովիցէ և ոչ ընդ իս
իցէ, իմ գործակից լինել ո՛չ իցէ: Եւ
զինչ ասացցոք գործակից. զի և զբահանգ
ևս լինի՝ զիմ ժողովալան ցրուել (Ոսկ.
մ. բ. 16, էջ 608):

Նոր Հայկ. և Զախըլախեան չունին այս
բառը. գիտեն միայն Հին Հայկ. և Առձ.
բառարանները: Առաջինը կը գրէ գրահանգ
կամ գրհանգ և կը մեկնէ « իւռ, հետտ,
անհաւան »: Երկրորդը կը զնէ միայն գրա-
խնայ ինչ և կը մեկնէ « հուսէ ըլլալ (Չա-
խնայ) ի որ կը համարիմ ուղիղ մեկնու-
թիւն »:

